

նում ենք խաղաղութեան միջազգային կոնգրեսի այդ հրաւերը: Սակայն այդ բոլոր համակրութեան հետ թող կը տանք մեզ մի քանի խօսք աւելացնել: Արեւմուտքի ներկայացուցիչները խոստովանում են, — և այդ մեծ պատիւ է բերում նրանց, — որ եւրոպացիները ապերախ են հանդիսացել և արհամարհել են արեւելեան ազգերի օրէնքները, աւանդութիւնները, որ նրանք ազա՛ն և անգութ են հանդիսացել, և միխթարվում են նըրանով, որ այդ եղել է այն ժամանակ, երբ տիրում էր բռնութեան թագաւորութիւնը: Իսկ այժմ, — լայտարարում են նրանք, ծագում է մի նոր դարաշրջան: Հաւատանք արդեօք, մոռացութեան տակով այն փաստերը, որոնք կատարվել են և կատարվում են Եւրոպայի աչքերի առաջ: Արդարութիւնը պահանջում է, որ խաղաղութեան և եղբայրսիրութեան գաղափարների տարածման հետ միասին աշխատեն իրական միջոցներ գործադրել այնտեղ, ուր թուլարարում են խաղաղութեան անուշով սարսափելի գաղանգութիւններ և այնպիսի դէպքեր, որոնք արմատախիլ են անում խաղաղութեան գաղափարը, սերմանում են ազգերի մէջ անհաշտութեան և վրէժխնդրութեան անսպառ զգացմունքներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Ր Է Յ Օ Ր
XXXIX

Ներքին գործերի միջխտարը, ինչպէս այս օրերս տեղեկացանք Պետերբուրգի լրագիրներից, թող է տուել «Киевлянинъ» լրագրին սրանից յետոյ հրատարակվել առանց ցնեղութայի, ուրիշ խօսքով չենթարկվել սկզբնական գրաքննութեան: Ինչպէս յայտնի է, մինչև այժմ միայն և բոլոր մայրաքաղաքներում հրատարակվող լրագիրներն էին օգտվում այդ արտօնութիւնից, չենթարկվելով թուլտուութիւն տուցած դէպքում, սկզբնական գրաքննութեան, մինչդեռ Պետերբուրգից և Մոսկվայից դուրս, կամ ուրիշ խօսքով՝ դաւաճական լրագրի տարածումը ենթակա էին սկզբնական գրաքննութեան:

ձմարիտ է, ներքին գործերի միջխտարն իրաւունք է տրված, համաձայն ցնեղութեան կահմանադրութեան 6-րդ յօդուածի, թող տա՛ւ երբ նա կուզենայ, առանց սկզբնական գրաքննութեան հրատարակել և գաւառական լրագիրները, բայց մինչև այժմ, որքան գիտենք, այդպիսի դէպք չէ եղել և «Киевлянинъ» լրագրի դէպքը, իբրև քաղաքական լրագրի, առաջինն է: Եւ իբրև առաջին դէպք՝ գաւառական քաղաքական մամուլի կենսիք մէջ, կարծում ենք, արժանի է ուշադրութեան:

Այլ բան էր գաւառական մամուլը սրանից քան տարի առաջ, և այլ բան է այժմ: Նա այժմ հասունացել է, և դարձել պետութեան ամբողջ մամուլի մի անհրաժեշտ մասը, շատ կարեւոր դեր կատարող մի մարմին: Եթէ առաջ միմիայն մայրաքաղաքների մէջ հրատարակվող օրդանիւններ էին հատարվում արժանի մի այդպիսի արտօնութեան, ինչպէս է առանց սկզբնական ցնեղութայի հրատարակվել, այժմ, ամենայն վստահութեամբ կարելի է նոյն արտօնութիւնը տարածել և գաւառական մամուլի վրա, որի շատ օրգանները այժմ աւելի բարձր են մայրաքաղաքի շատ լրագիրներից, և եթէ մի պակասութիւն ունեն նրանց հետ համամատեցելի այդ միայն այն է, որ չեն հրատարակվում Պետերբուրգում կամ Մոսկվայում: Բայց միթէ՞ դա պակասութիւն է...

Ռուսաստանի դանաղան մասերում, գաւառական կենտրոններում հրատարակվում են շատ լրագիրներ, որոնք պարծանքով կարող են մրցել նոյն իսկ «Киевлянинъ» լրագրի հետ, և այդ պատճառով թող ենք տալիս մեզ յուսալ, որ նրան տուած արտօնութիւնը բացառութիւն չէ, այլ ընդհանուր սկզբնական, որ շուտով կարող է տարածվել գաւառական ուրիշ օրդանիւնների վրա...

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅՈՒՆՆԵՐ

Յունուարի 23-ին

Ծանր, շատ ծանր գրութիւն է ստեղծվել Նոր-Բայազետի ամբողջ գաւառի համար: Այս քանի մի տարվայ անբերրութիւնը յետին չքաւորութեան է հասցրել ամբողջ աղքատացեալութեան: Բարձր բնակիչների մեծամասնութիւնն էլ, բացի մի քանի հարուստ կալուածատէրերից և վաճառականներից, բաւական չունի նշանակութեամբ զաղացած են. քանի-քանի ընտանիքներ օրերով ցամաք հաց չեն կարողանում ձարել: Մեր Բա-

րեգործական ընկերութիւնը այնքան չնչին ոյժեր ունի, որ անկարող է օգնութիւն հասցնել: Թէև տօների առիթով ման եկան և ժողովեցին 100 ռուբլի, մի խումբ պատանիներ էլ ինքնաբերաբար «աւետիս» շրջեցին և մօտ 25 ռ. հաւաքելով դարձեալ յանձնեցին Բարեգործական ընկերութեան, սակայն դրանով, ինչպէս ժողովրդական առածն ասում է՝ «եւրա չի սաղանալ» թշուառութեան առաջն առնելու համար աւելի արմատական միջոցներ են պէտք: Ժողովուրդը իբրեւ շունենալով հանգիստ հեծում է՝ պարտքի տակ: Եթէ հաւատանք գիւղացիների պատմածներին, 50—60% տալը սովորական բան է: Քանի-քանի գիւղացիներից լսել ենք, որ ասում են. «մանկէն» ամբար մէկ շալի շահ եմ տալիս», էլ որտեղից ժողովուրդը կարողանայ ապահով լինել: Այստեղ մի փոքրիկ շրջանում միտք է յղացել աղքատացեալութեան պարտքի քանակութիւնը ստուգել և դիմել կառավարութեան, որ փոխառու կասսա հիմնվի իսկզճերին տղուկներին ձեռքից փրկելու համար: Բայց երբ կը լինի այդ—ահա հարցը: Ժողովրդական առածն ասում է. «մինչև առուն ջուր կը գայ, գործի աչքը դուրս կը գայ»: Մինչև փոխառու կասսայի հարցը կը հասնանայ և կը հիմնվի, գիւղացին անտեսապէս բողբոլվի կը քաջայգի: Այս հերքել էր, քաղաքային հողերն էլ ուղում են իրելի: Ինչպէս պիտի կարողանայ քաղաքը իր ծախսերը ծածկել: Պիտի կրկնապատկի ծխական հարկը, բայց ժողովուրդը որտեղից պիտի տայ: Երբ այժմ նոյն իսկ քիչ գումարը հնարաւորութիւն չունի վճարելու...

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրենքու)

Ատարխան, յունուարի 14-ին
Հնորճաւորում եմ «Մշակի» ամենօրեայ հրատարակութեան թղթատուութիւն տոնալը: Արխատակէս արքեպիսկոպոս

Հին-Ղրիմ, յունուարի 25-ին
Սրտագին ուրախ եմ «Մշակի» ամենօրեայ հրատարակութեան համար: Բնորոշեցէ՛ք իմ բարեմաղթութիւնները: Խորէն եպիսկոպոս

Նեոյի (Ֆրանսիա), փետրվ. 1-ին
«Մշակի» յօրեւանիւն մաղթում եմ յաջողութիւնի և պարծանս ապրել: Իշխան Լուսինեան

Պարիզ, յունուարի 26-ին
Ցանկանում եմ «Մշակին» առաջադիմութիւն լայն ծաւալով: Ռուստոմբեր՝ Ալբրեան, Բաղդասարեան, Դաւիթ-բեգ, Տէր-Մարտիրոս, Նաւալը:

Լէյպցիգ, յունուարի 16-ին
Բնորոշեցէ՛ք մեր հնորճաւորութիւնները «Մշակի» 25-ամեակի առիթով: Թող միշտ կենդանի մնայ մեծ հրապարակասօսի անունը: Հայ Ռուստոմբեր

Իգլիկ, փետրվարի 1-ին
Այսօր, երբ հրատարակվում է առաջին համարը ամենօրեայ «Մշակի», որ բոլորեց իր փառաւոր 25-ամեակը, մեզ, Մայր-Արարցի ափերից և ալեգարդ Մասիսի ստորոտից՝ ի դէմս հայ աշխատողների, սրբազան պարտք ենք համարում ողջունել «Մշակի» փայլուն գործունէութիւնը և մաքուր գաղափարները, որ հրաշալի կերպով ապացուցեց թէ ճշմարտութիւնը, արդարութիւնը և սէրը, անկեղծութեան և անուշութեան հօգու յանաւորութեան ներքոյ, ոչնչացնելով նախապաշարմունքների դուրսը խաւարը՝ վերջ ի վերջոյ յաղթող կը հանդիսանայ: Վեցէ՛ք «Մշակը»:

Բաղրատ Արաղեան, Տիգրան Ղազարեան, Բաղրատ Յարութիւնեան, Աղէքսանդր Սէթեանց, Տիգրան Առաքեանց, Ներսէս Ներսէսեանց, Յովհաննէս Խօջաճեանց, Խաչատուր Աբրահամեան, Նիքիտ Սեփեան, Յարութիւն Վարդեան, Բաղդասար Մէլք-Առաքեան, Աղէքսան Ղարիբեան, Գեորգ Ղազարեան, Արամ Մանուկեան, Սեդրակ Աւետիսեան, Արշակ Մէլք-Առաքեան, Մարկոս Տէր-Միսնակեան, Պետրոս Աբրահամեան, Սեդրակ Նազարեան, Ննոր Յովսէփեան, Աւետիս Ահարեան:

(Պօստով)

Աղէքսանդրապոլ, յունուարի 20-ին
Սրտանց չնորճաւորելով «Մշակի» ամենօրեայ հրատարակութիւնը՝ ցանկանում ենք հայոց անդրանիկ, յաղթող լրագրին աւելի բախտաւոր օրերում տօնելու իր յիսնամեակը: Զգում ենք, որ խմբագրական ներկայ կազմակերպութիւնը ոչնչի միջոց չը խնայէ փառաւոր կերպով յաղթելու անմահ-հիմնադրի՝ անմոռանալի Արծրունու յաւիտենական յիշատակը, նրա ստեղծած ու փայփայած հայոց հասարակութեան ընտիր մեծամասնութեան համար անհրաժեշտութիւն դարձած «Մշակի» քսան և հինգամեակը տօնելու համար: 100 ստորագրութիւն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, փետրվարի 4-ին, Ամենայն հայոց Կաթողիկոսը ձանապարհ պիտի ընկնի Բագու եր-

կաթողու երեկոյեան գնացքով, ժամը 9 1/2-ին: Ինչպէս լուրս ենք, Վեհափառ Բագու մնալու է 3—4 օր: Բագուից վերադառնալիս մտադիր է այցելել Գանձակ, ուր կը մնայ մի օր, և Աղստաֆայի վրայով կը մեկնի Էջմիածին, ուր կը հասնի մեծ-պատի սկզբի օրերին:

Մեզ հաղորդում են, որ այժմ մանրամասն տեղեկագիր է կազմվում հայոց եկեղեցական կալուածքները մասին:

Կ. Պօլսից, յունուարի 23-ից, հաղորդում են հետեւելու. «Արթին փաշա Տատեան, սուլթանի յանձնարարութեամբ, յետ առաւ իր հրաժարականը»:

Մեր խմբագրութեան հրաւերով, բժիշկ Վահան Արծրունի, Ստեփան Մալխասեանց և Առաքել Սարգիսեանց, որոնք արդէն յայտնի են մեր ընթերցող հասարակութեան իրանց գրեւծընդունելու սրանից յետոյ մշտապէս կաշիստակցեն «Մշակին», իւրաքանչիւրը իր մասնագիտութեան վերաբերեալ ճիշդ մէջ:

Մեզ հաղորդում են, որ Բագուի հայոց դերասանական խումբը Թիֆլիսում իր ներկայացումները պէտք է տայ վրաց ազնուականների թատրոնում, որը արդէն վարձված է այդ նպատակի համար:

Մեզ հաղորդում են, որ այս օրերս Բաթումի հայոց հասարակութեան կողմից Թիֆլիս եկան չորս պատգամաւորներ՝ պ. պ. Մ. Շաթիրեան, Մ. Տէր-Ասատուրեան, Թ. Խաչատրեան և Ս. Յարութիւնեան, ինչպէս Վեհափառ Կաթողիկոսին յարգել Բաթումի հայ հասարակութեան որոշումը և վերջ տալ քահանայական հարցին: Կաթողիկոսը, յարգելով հասարակութեան խնդիրը, կողմակալ հաստատեց Մետրուկ քահանայ Մեղեանին և իբրև երկրորդ քահանայ՝ Կարապետ քահանայ Մալխասեանին՝ Բաթումի վրա: Բացի դրանից Թիֆլիսի առաջնորդարանից հեռադիր ուղարկեց՝ քննիչ Էմանուէլ քահ. Նազարեանին և Յ. քահ. Խաչեանին անմիջապէս հեռանալ Բաթումից:

Մեզ յայտնել էինք, որ մինիստրութիւնը թող է տուել պնդի արդապա՝ ձեռք բերել այդպիսիների համար առանց մարս վճարելու: Այժմ մինիստրութիւնը հեռագրում է, որ այդ արդապա կարելի է գործադրել միայն Թիֆլիսի և Ներսիսի նահանգների այգիները բժիշկու համար: Այդպիսով Կովկասի միւս նահանգները զրկվում են էժան արդապա ունենալու միջոցից: Ցանկալի է, որ զոնէ Թիֆլիսի և Ներսիսի նահանգի այդպիսիները շտապեն ձեռք բերել բերած արդապա, որի քանակութիւնը միայն 3000 պոլ է:

ՐԱԳՈՒԻՑ գրում են «Новое Время» լրագրին, որ նախկին ոստիկանապետ Աղէքսերբեկ պաշտօնակցութիւնը և նրա տեղ իշխան Վօլոժնիկով ոստիկանապետ նշանակելը այն հետեանքն ունեցաւ, որ փաստաբան Ստարոշելով սպանութեան յայտնի գործը նորից սկսել է յուզել և նոր ոստիկանութիւնը ձեռք է բերել այնպիսի փաստեր, որոնք միանգամայն պէտք է լուսաբանեն այդ մութ գործը:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յունուարի 20-ին, դուռնի դահլիճում տեղի ունեցաւ քաղաքային վարչութեան անդամներից մէկի ընտրութիւնը: Ընտրութեան մասնակցում էին 26 ձայնաւորներ: Քուէարկվողներից Բախիշ-բեգ Մարգարեանց ընտացաւ 23 սպիտակ, 3 սև քուէ, իսկ Յովսէփ-բեգ Մէլք-Յովսէփեան և Գ. Գրիգորեանց 7 սպիտակ, 19 սև: Այդպիսով ընտրվեց Բախիշ-բեգ Մարգարեան. նրա ընտրութեամբ ձայնաւորները գոհ են: Քաղաքային վարչութիւնը մինչև այսօր քաղաքի համար մի չօչափելի գործ չէ կատարել: Գոնէ սրանից յետոյ անէին»:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՅԻՑ մեզ գրում են. «Կիրակի օր, յունուարի 25-ին, ահագին բազմութեան ներկայութեամբ կատարվեց օրիորդաց պրօգիմ-նաղիայի պաշտօնական բացումը և նոր կառուցված շէնքի տօնում օծումը: Նա շինված է Թերեկի ձախ կողմում, որտեղ պիտաւորապէս ապրում է քաղաքի աղքատ դասակարգը: Այդ է պատճառը, որ պրօգիմնաղիան իր ծրագրով ու պայմաններով յարմարեցված է ցածր դասակարգի պաշտօնակցներին, որոնք կազմում են ժողովրդական միջնակարգի ուսումնական: Այդ պատճառով անկանխելու ուսանել ձրի է: Յետոյ գալիս են երեք հիմնական դասարաններ, որտեղ ուսման տարեկան վճար որոշված է 10 ռուբլի: Նրաժընտրութեան, պարի և օտար լեզուների տեղ վճարված է մոցնիկ ձեռագործի և տեխնիկական նկարչու-

թեան դասեր, որոնք պատրաստելու են աշակերտահիւններին այնքան, որ նրանք չորրորդ դասարանում մի տարվայ մէջ կարողանան մի որ և է արհեստ սովորել: Պրօգիմնաղիայում աւարտողները ձեռագործի և գիւղական ուսումնարանի վարժուհու վկայական են ստանալու: Ցանկացողները, առանց քննութեան, կարող են մտնել օրիորդաց դիմնաղիա և պօստ-հեռագրական ուսումնարանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայր Շարմուտանի խմբագրութեամբ Պարիզում հրատարակվող «Oeuvre d'Orient» ճանդէսի յունուարի համարը հաղորդում է, որ Վանի, Մուշի և Բիթլիսի վիլայէթներում քրիստոնեայ ազգաբնակչութեան մէջ խակական սով է տիրում: Հաղաւոր սոված հայեր փախչում են գիւղերից, որտեղ նրանք զրկվելու ամեն բանից, — ցորենից, գարուն, սուսերից և դոմար են քաղաքները որորմութիւն խնդրելու: Բայց քաղաքները իրանք էլ աւերված և աղքատացած են: Աղէտի վրա աւերվում է և այն չարիքը, որ թիւրքաց կառավարութիւնը ծայրահեղ անպիտութեամբ հաւաքում է բոլոր հարկերը, որոնց թւում և զինուորական տուրքը, և բացառութիւն չէ անում նոյն իսկ այն հաղաւոր հայերի համար, որոնք սպանվել են վերջին կոտորածների ժամանակ: Միւս կողմից, ինչպէս հաղորդում են և Վիլնիայի լրագիրները, արտասահմանեան բարեգործները նշանաւոր գումարներ են ուղարկում Կ. Պօլսի հայոց պատրիարքանին՝ սոված հայերին օգնելու համար, բայց պատրիարքարանը այդ գումարները՝ փոխանակ բուն նպատակին գործադրելու, դրանով պատրիարքարանի պաշտօնեաների ուժիկին է տալիս: Տեղի է առել, որ քաղաքներից խլում են հաց և դրոմ... առաջ:

«Ռուսաց գործակալութիւնը» հեռագրում է Կ. Պօլսից, որ համիդէի հեծկազմերը թիւր աւերվում է: Այժմ գլուխթիւն ունի 56 1/2 գունդ համիդէի, բայց, ինչպէս նախագծված էր 1897 թվին, այդ հեծկազմերը թիւր պէտք է հասցնել 100 գնդի: Այժմ պատրաստ են թէ մարդիկ և թէ ձիերը և արդէն կազմակերպվում են երեք գնդեր:

Կ. Պօլսից մի մասնաւոր նամակով յունուարի 23-ից գրում են. «Օրմանեան պատրիարք» իրեն եղած կայսերական խոստումներից դեռ ևս գործադրուած չը տեսնելով, նորէն մարդ խաբեց պալատ՝ յիշեցնելու այդ խոստումները: Սուլթանը պատասխանել է՝ «Նա հայոց ազգը մոռցած չեմ: Երեք օրէն՝ Բամազանի 15 է, այսինքն Պօլսոյ համար շատ կարեւոր օր մը, երբ սուլթանն իր պալատին պիտի դուրս ելնէ, Վալարկայի կամուրջը պիտի անցնի, երթայ Ստամբուլ, ուր պիտի համարէ մարդաբէի վերաբերման: Աստիկանութեան կողմանէ շատ խիստ հակադրութիւն կայ: Վրտու թէ կ'ամուսնւի տակը 40 ոստիկան կը սպասեն և ասանց երկուքը անցնել օրը տեղի ունեցած սաստիկ ցուցարարին ստուեր են»:

ԿՕՄՍ ԿՈՒՆՈՒԹ

Երէկ հեռագրիւր լուր բերեց կոմս Կաշուկի մահվան մասին: Կոմս Գուստավ Կաշուկի—աւարտօ-ուսուցարական պետական գործիչը ծնվեց Մօրավիայում 1832 թվին: Կաշուկի լրագոր միւնիստը էր Հռօմում, ապա անցաւ Կոպէնհագէն, իսկ 1830 թվին նշանակվեց Պետերբուրգի դեսպան, և այդ պաշտօնում մնաց մինչև Աստոր-Ուսուցարկայի արտաքին գործերի մինիստր Հայմերի մահը, որի պաշտօնն ընդունեց 1881 թվին նոյեմբերին: Մի և նոյն ժամանակ Կաշուկի նշանակվեց մինիստրների խորհրդի նախագահ և կայսերական պալատի մինիստր:

Կաշուկի կոյր հետեղ էր Բիսմարկի՝ քաղաքականութեան, և նա յաճախ տեսակցութիւններ էր ունենում Բիսմարկի հետ Զայցերբուրգում, Հաուպտ-նում և Վարցիւնում: Սկզբում դա այդպէս անուանված երեք կայսրների դաշնակցութեան քաղաքականութիւնն էր, ապա միջին եւրօպական պետութիւնների կամ երեքպետեան դաշնակցութեան քաղաքականութիւն. այդ դաշնակցութիւնը վերաւորովեց վեց տարով 1891 թվին յունուարի 28-ին արդէն Բիսմարկի անկումից յետոյ: Բալկանեան թերակղզու վրա Կաշուկի ուսուցչ քաղաքականութեան տարածման դէմ էր գործում: 1885 թվին նա միջամտեց սերբ-բոլղարական պատերազմում և արդիւնք բոլղարները յարձակողական չարմուք:

ցոյց տուել Լէրուային գաղտնի dossier. Ապա կանգնեց Պէլիէ, որը պահարակեց Պիկարին այն բանին համար, որ նա խուզարկութիւն կատարեց Էստէրնայի մօտ: Լաբօրի պատասխանում է, չէ որ Պէլիէն հրամայեց խուզարկութիւն կատարել Պիկարի մօտ: Տեղի է ունենում մի խուզարկութիւն: Նախ փաստաբանները գրաւոր բողոք կազմեցին դրո՛ւին չը մասնակցող փաստաբանների դէմ, որոնք աղմկալի կերպով ցոյց էին անում մինչև նիստի ընդհատումը՝ թէր և դէմ Պիկարի: Զգուշութեան մեծ միջոցներ են ձեռք առնված դատարանի շինութեան շուրջը, ուր հաւաքված էր մեծ ամբիւս: Երբ հանգստութիւնը վերականգնվեց, Լաբօրի և Պէլիէի մէջ շեղման վիճաբանութիւն սկսվեց: Պէլիէ պնդում էր, որ Մատվէլ Բրէյֆուս Էստէրնայի խնայաւորութեան ոչ մի ապացոյց չը ներկայացրեց: Լաբօրի պահանջեց հարցաւորորդի ենթարկել այն ագնտին, որը ներկայացրեց հուշակաւոր բողոքը: Մայր Լօտ պատասխանում է, որ դա մի հասարակ ցրվիչ էր, որը ընդունակ է չէր լինի պատասխան տալ: Լաբօրի պահարակում է Բավարիին այն բանի համար, որ նա վատ է քննութիւնը կատարել: Բավարի պատասխանում է. «Ձերտարակա քննութիւնը այնպէս չէ կատարվում, ինչպէս ձերը»: (Արմուկը կրկնում է): Պիկարի պահարակում է Բավարիին այն բանի համար, որ նա ինստիտուցիայի օգնութեամբ է գործում: Նախագահը դադարեցնում է նիստը: Զանազան ցոյցերով հասարակութիւնը ողջունում է հեռացող Պիկարին, սուրբը խառնվում է ծափահարութիւնների հետ: Մարտիկի կոսկրոտը է տեղի ունենում: Ներկայ եղբայրներից մէկը ապուստ է տալիս փաստաբաններից մէկին: Դուրս գալու ժամանակ լուրջ դէպքեր տեղի չունեցան: Մի քանի հետաքրքրիւթներ աղաղակներով զինաւորեցին Զօլային:

ՊԱՐԻԶ, 31 յունվարի: Երեկոյան 6 ժամին Սեփառապօղոսն ընդհատեց իրա թափառում էր ցոյց անող ամբիւսը: № 36 տան առաջ ամբիւսը կանգնեց և ջարդեց «Լէվի և Բրէյֆուս» ֆիրմային պատկանող մագաղիտի պատուհանները: Նոյն բօլակն տեղի ունեցաւ ատրճանակի հարուած, որը, ինչպէս կարծում են, արձակեց ձիարաջ երկաթուղու վերնադակից: Ոստիկանական պրէֆէկտը եկաւ դէպքի տեղը: Ատրճանակ արձակողը ստիքի գործակառարն էր եղել: Նա դատի կենթարկվի: Ոստիկանութիւնը մօտ տասը մարդ ձերբակալեց: Կարգը վերականգնված է: Պրէֆէկտը վաղը ամենախիստ միջոցներ ձեռք կառնի: Վաղ տէր բողոքներ վրա ցոյց տեղի ունեցաւ: Բէրն-Ֆէյնի տան պատուհանների վրա քարեր գցեցին, ծառաներից մէկը բառական ծանր վիրաւորված է: Մի քանի ձերբակալութիւնների տեղի ունեցան:

ՊԱՐԻԶ, 1 փետրվարի: Զօլայի դատը: Դատարանի դահլիճը ցրված է: Մեծ կենդանութիւն է տիրում: Զօլայի դալը առանց դէպքերի է անցնում: Նիստը բացվեց 12 ժամ 20 րոպէին: Պիկարին նորից կանչում են: Նա բացատրում է, որ Զօլան չէր մեղադրում զինուորական դատարանը այն բանի համար, թէ դատարանը արդարացրեց Էստէրնային ստացած հրամանի համաձայն, այլ թէ դատարանը դատում էր պակասաւոր զօլուճիկների հիման վրա: Նախագահի պահանջով, Պիկար ասում է, որ Լէրուային ինքն 15 անգամ ընդունել է իր կարբինէտում, բայց հերքում է, թէ հաղորդել է նրան այն զօլուճիկները: Գնդապետ Անրի պնդում է այն բանի վրա, թէ այդ զօլուճիկները սեղանի վրա էր դրված: Գնդապետ Դօնդ և մայր Լօտ ցուցմունքներ են տալիս նոյն մտքով: Լէրուան այդ բանը պաշտօնապէս հերքում է: Լաբօրի մատնացոյց է անում Անրիի խօսքերի և Բավարիի զեկուցման մէջ եղած հակասութիւնների վրա: Անրի մօտեցնում է Զօլայի պաշտպանին և ասում է. «Նա ձեզ չեմ թող տալ կասկած յայտնել իմ տուած ցուցմունքների մասին»: Պիկար բողոքում է Անրիի խօսքերի դէմ, որը աւարկում է. «Նա պաշտօնապէս պնդում եմ այն բանի վրա, որ Պիկար ասում է խօսում»: (Բացադնարկութիւններ, աղաղակ): Պիկար պահանջում է, որպէս զի իրան թող տան բացատրութիւն տալ ժուրիի առջև, և ասում է. «Դուք լսեցիք, թէ ինչպիսի գզուելի մեղադրանքներ են բարձրում ինձ վրա Անրին, Լօտ և Պատր-Նիւլլամ: Այդպէս են վարվում նրանք այն պատճառով, որ չեն կամենում, որպէս զի խօսակցութիւն լինի այն բանի մասին, ինչ որ իրանք են ստեղծել: Նոյն վերաբերում է ինձ, ես կարծում էի, թէ պէտք է լոյս տալ և արդարադատութիւն կատարել: Իմ գլխին վիրաւորանքներ թափեցին: Նա զոհ եմ իմ բարի գիտաւորութիւնների, իմ կանօնաւոր գործունէութեան եղանակի, իմ անձնութեան թեան այն գործին, որը ես արդարացի եմ հա-

մարում»: Մէկ ուրիշ ինցլիզնտ տեղի ունեցաւ փաստաբանների և դատարանի նախագահի մէջ այն հարցի առիթով, թէ ինչ թւեր են դրված զօլուճիկների վրա, որոնց մասին զօլուճութեամբ են համաձայնութիւն կազմում: Գնդապետ Անրի յայտնում է, թէ այն թույլներ, որի մէջ կային «այդ լիւր Դ» խօսքերը, ամենին չէր վերաբերվում Բրէյֆուսի գործին (չարժու): Անրի բացատրում է, թէ այդ թույլներ պատկանում է այն գործին, որը նշանակութիւն չունի և ինքն էր վարում: Նոյն վերաբերում է Բրէյֆուսի իսկական dossier-ին, ինքն այդ թույլներ երբեք չէ տեսել: Ապա իր ցուցմունքներն է տալիս Բրէյֆուսի նախկին պաշտպան Դէմանդ: Դէմանդ ասում է, թէ Շէրէր-Վէստերի գործունէութեան եղանակը և Մատիւ Բրէյֆուսի մասնութիւնը Էստէրնայի դէմ սատակ յուզեցին իրան, որովհետև իր սրտի մէջ յոյս ծնվեց Բրէյֆուսի գործի վերաբնութեան հնարաւորութեան վրա: Դէմանդ բերում է իրաւաբանական այն պատճառները, որոնք արգելեցին, ամենից առաջ, զինուոր արդարադատութեան միջնորդին: Մասնաւորապէս որ կառավարութիւնը այն հայեացքը չունէր, թէ հարկաւոր է վերաբնութեանը: Այն ժամանակից Դէմանդին յայտնի եղաւ մի «նոր փաստ», որի շնորհով կարելի էր լինել վերաբնութեանը տալ գործը: Փաստաբան Սալ հաղորդեց իրան, որ այն օֆիցէրներից մէկը, որը զինուորական դատարանի անդամներէ մէկն էր, ստեց իրան, թէ դատարանին հաղորդվեց գաղտնի դօկումէնտը: (Մեծ յուզմունք): Լաբօրի հարցին, Դէմանդ պատասխանում է, որ «Matin» լրագրում տպված ֆակսիմիլն սատակ նման էր այն նիւթերին, որի գոյութիւնը Պէլիէ հերքում էր: (Շարժում): Լաբօրի հարցնում է, թէ արդեօր ընդհատեց առաջարկվեց դատարանի քննութեանը: Դէմանդ պատասխանում է. «Դատարանի անդամներ և իմ մօտ կային բուսանկարչական պատկերներ, որ յետ վերջինի նիստից յետոյ, դրեցին ծրարի մէջ և, երբի, «Նիւզսթրիպ» լրագրողներից: Դէմանդի ցուցմունքները ջերմ վիճաբանութիւնների առարկայ են դարձնում: Մի քանիսն են ասում են, որ այդ ցուցմունքը կարող է դատի վերաբնութեան հիւր ծառայել, միւսները հերքում են, որովհետև Դէմանդ ոչինչ ապացոյցներ չը ներկայացրեց:

ՊԱՐԻԶ, 31 յունվարի: («Հալասի գործակալութիւն»): Զօլայի դատը: Ընդհատում է տեղի ունենում Լաբօրի և Գնդապետ Անրիի մէջ, ապա մէկ ուրիշ ընդհատում: Պիկարի և Անրիի մէջ, որոնք կծու խօսքեր են միմեանց ասում այն դադարի զօլուճիկների առիթով, որ Պիկար ցոյց էր տուել Լէրուային: Տեղի են ունենում բուռն վիճաբանութիւններ դատարանի նախագահի և Լաբօրի մէջ, որը պահանջում է ցոյց տալ գաղտնի «dossier» և «բողոք», որպէս զի կարելի լինի համեմատել ձեռագիրները: Նախագահը և ընդհանուր փաստաբանը մերժում են: Լաբօրի իր եզրակացութիւններն է անում: Նիստը ընդհատվում է: Նիստը վերսկսվելուց յետոյ, դատարանը մերժում է Լաբօրի բացատրութիւնները: Բանկ յայտնում է, թէ Զօլան ապշած էր դատավարութեան կողմնապահութեամբ երկրորդ զինուորական դատարանում, և Զօլայի յօդուածը արդիւնք է մի մարդու վարմունքի, որը մեծ սիրտ և մեծ արիւթիւն ունի: Գրականապէս ժխտար, որը ներկայ էր զինուորական դատարանում, նոյն մտքով ցուցմունքներ տուեց: Պատգամաւոր Ժօրէս տալիս է իր ցուցմունքները: Ժօրէս խօսում է կառավարութեան ցոյց տուած թույլութեան մասին Էստէրնայի գործի դժուր վիճակի քննութեան ժամանակ, և այդ վարմունքը ինքն վերադրում է այն հանգամանքին, որ կառավարութիւնը անհրաժեշտ էր համարում ծածկել 1894 և 1897 թվերի էկզպերիզմների մէջ եղած հակասութիւնները: Ժօրէս դատարանից ինքնապէս կառավարութիւնը այն բանի համար, որ նա քննութիւն չը կատարեց գաղտնի զօլուճիկներն ունեցող «քօլի տակ գտնվող տիկնոջ» գործի մասին: Ժօրէս մեղադրում է զինուորական շտաբը այն բանում, որ նա դատակից էր Էստէրնայի դէմ և ասում է, որ դատավարութիւնը կատարվում էր կարծես միայն մի քանի օֆիցէրներին և ծառայողներին արդարացնելու համար: Վերջը Ժօրէս պահարակում է միմեանքութիւնը այն բանի համար, որ նա լոյս չէ տալու երդուհանքների առաջ: Դեռու համար այն պատգամաւորները, որոնք միծմարանութիւնը համոզված է, թէ ապօրէն ակտ է կատարված, լոյս չէ պահանջում: Դէլիատէ և Դիւլիւի նախկին մի-նիստները յայտնեցին նրան, թէ Մէրսի իրանց պատմում էր միայն բողոքի մասին: Զօլան իրաւունք ունէր, երբ երդում էր նրանց դէմ, ու նրան վիրաւորում էր: Զանձին Զօլայի հալածում են մի մարդու, որը զրկեց զինուոր շտաբը այն

թշուառ անպատասխանատուութիւնից, որի շնորհով նախապատրաստվում են ապագայ թշուառութիւնները: (Բարձրաձայն բողոքներ և զանազան ցոյցեր):

ՊԱՐԻԶ, 2 փետրվարի: Վերադարձաւ թեան պալատից՝ դուրս եկող օֆիցէրներին ամբիւսը ողջունում էր «կեցցէ հանրապետութիւն» բացականչութիւններով: Լուր է պտտում, որ Պիկար սեկունդանտներ ուղարկեց Անրիի մօտ նրա համար, որ Անրի պաշտօնապէս հերքում էր Պիկարի ցուցմունքները դատարանում:

ՊԱՐԻԶ, 2 փետրվարի: Էկզպերտ Բեքարիլիօն հաւատադրում է, որ բողոքի գրել է Բրէյֆուս: Նա աւելացնում է, որ կապացուցանի այդ բանը, եթէ իրան կը ցոյց տան այն մերկայանող զօլուճիկները, որ 1894 թվին վերջին Բրէյֆուսի բնակարանից: Լաբօրի հարցնում է այն զօլուճիկներին մասին, որոնք ծառայեցին Բէրտիլիօնի էկզպերիզի համար: Բէրտիլիօն պատասխանում է, թէ այդ զօլուճիկներին մասին կարող է խօսել միայն դատարանի հրամանով: Նախագահը պատասխանում է, որ դա դատարանի գործը չէ: «Այդ դէպքում»—ասում է Բէրտիլիօն,—ինձ հարկաւոր է զինուորական միջնորդի թղթաւորութիւնը:—«Ո, այն ժամանակ,—բացականչում է Լաբօրի, մենք կարող ենք հաւատացած լինել, որ մենք այդ թղթաւորութիւնը չենք ստանայ»: Նիստը փակվեց առանց դէպքերի և յետաձգվեց մինչև երկուշաբթի:

ԲՕՄԲԷՅ, 31 յունվարի: Ժամապետը շատ սատակացել է Պէլիէին, ուր արդէն Դօշխառութեան և Զալադարեան չլրջաններ 8 գիւղեր վարակված են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 փետրվարի: Յունվարի 30-ին Նոյն Մեծութիւնների մօտ Էրմիտաճային թատրօնում կայացաւ երկրորդ ներկայացումը: Հրաւիրված էին 300 անձինք: Ներկայացումից յետոյ, Բարձրագոյն ներկայութեամբ, տեղի ունեցաւ ընթերցւոյ:

Հաղորդակցութեան ճանապարհների միմեանքը, վերադառնալով Սիբիրի ճանապարհորդութիւնից, միմեանքութեան վարչութեան ղեկը իր ձեռքն առաւ:

Նշանակվում է ժամադրման չէֆի օգնական զինաւորչլորնաւոր Պանտելեւ—ժամադրմանի առանձին կօրպուսի հրամանատար:

ԼՕՆԻՊՈՆ, 1 փետրվարի: Անգլիական դատարանը 18 ամսվայ բանտարկութեան դատապարտեց էմիգրանտ Բուրգէվին՝ տէրրօրիստական գործողութիւններին գրեթե համար, իսկ դրան համակոխ՝ Վէրմիլիօն—ստիպողական աշխատանքներին երկու ամսով:

ՊԱՐԻԶ, 1 փետրվարի: Պատգամաւորների ժողով: Էրմեստ (հարցապնդում է անում) Բրէյֆուսի գործի առիթով: Բիլիո կարծում է, որ այդ առարկայի մասին վիճաբանութիւնները կարող են տեղի ունենալ միայն Զօլայի դատը վերջանալուց յետոյ, բայց այժմ արդէն միմեանքը արդարացնում է իրան այն ինստիտուցիաների դէմ, որ իրը թէ նա յարաբերութիւններ է ունեցել Բրէյֆուսի ընտանիքի հետ, և կրկնում է, որ Բրէյֆուս արդարացի կերպով է դատապարտված: Մէլին պահանջում է վիճաբանութիւնները յետաձգել մինչև Զօլայի դատի վերջնալու: Բօշ առարկում է, բայց կարգի է հրաւիրում, որից յետոյ Մէլին առաջարկութիւնը ընդունվում է 478 ձայնով 72-ի դէմ: Բօշ, Բօշկար և Կաստեյն պահանջում են հարցապնդում մտցնել ինցլիզնաների մասին:

ԱՍՏՐԱԼԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԻՆՈՒՍԻՄ մօտ ապագայում բացվելու է առեւտրաւոր պաշտօնի տեղ: Այդ պաշտօնը ցանկացողները հրաւիրվում են ուղարկել կոնստանտնուպոլիս իրանց ինքնին և կարելու թղթերը: Նրանք պարտաւոր են լաւ խմանալ հայերէն և ռուսերէն լեզուները և գործակալութեան եղանակը: Ցանկացողներին տեղեկութիւն կը տրվի տարեկան ռոճկի մասին:

1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}
ՖԻՆԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանօնաւոր և ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԷՑԻԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյ, միտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 4/16 փետրվարի ՄԻՆԳՐԷԼԻ չորեքշաբթի, հաւաքաւոր ԵՆԷԼ: Եւ այսպէս շարունակ կարար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գինով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճին զիմել ընկերութեան գործակալներին՝

ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԴԱՐԻՆ, Նարէթիայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկեղաւ: ՆԵՄԵՐՍԻՄ, Սիօնի փող. հայերէն Սթրանու. քաղաքապետ: ԲԱԳՈՒՄ—պ. Ս. Դիւլարեանին, Կօլլաբա՝ կրկնապա հրապարակ: ՆՕՎՈՐՈՍՍԻՑԿԱ—պ. Միլիտօր Հերչեյնօրդերին: (№ 76) 1—20